ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ ՍՏԱՑՈՂԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԺԱՄԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____

Դուք ստանում եք այս ծանուցումը, քանի որ դուք IHSS մատակարարող եք _____
_____-ի համար:

Այս ծանուցագրով տեղեկացնում ենք ձեզ ձեր ստացողի ամսական հաստատված ժամերի մասին, և այն ծառայությունների մասին, որոնք ձեզ թույլ է տրվում կատարել ձեր ստացողի համար:

Ձեր ստացողի ամսական հաստատված ժամերն են _____:

Ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերն իր ամսական հաստատված ժամերն են՝ բաժանված 4.0-ի՝ _____:

2-րդ էջի աղյուսակը ցույց է տալիս այն ծառայությունները, որոնք հաստատվել են ձեր ստացողի համար (որոնք նշված են X նշանով), ինչպես նաև նկարագրում է այն աշխատանքը, որը կարող է արվել այդ ծառայության շրջանակներում: Դուք կվճարվենք միայն այն հաստատված ծառայությունները տրամադրելու համար, որոնք նշված են X նշանով:

Ձեր ստացողը պատասխանատու է ձեզ հետ միասին աշխատանքային ժամանակացույց ստեղծելու համար, որպեսզի տեղավորի իր առավելագույն շաբաթական ժամերը և ամսական հաստատված ժամերը: Խնդրում ենք նկատի առնել, որ եթե ձեր ստացողն ունի մեկ մատակարարողից ավել, ապա դուք, հնարավոր է, պետք է սահմանափակեք ձեր տրամադրած ծառայությունների քանակը, քանի որ ձեր մատակարարողը կարող է այլ մատակարարողների նշանակել այս ծառայությունների համար: Բոլոր մատակարարողների կողմից աշխատած ժամերը չեն կարող գերազանցել ստացողի առավելագուն շաբաթական ժամերն ու հաստատված ամսական ժամերը: Դուք չեք վճարվի IHSS ծրագրի կողմից այն ժամերի համար, որոնք գերազանցում են ձեր ստացողի հաստատված ամսական ժամերը:

<u>Եթե դուք աշխատում եք մեկից ավել ստացողների համար</u>, դուք կարող եք աշխատել շաբաթական մինչև 66 ժամ: Դուք պարտավոր եք տեղեկացնել ձեր յուրաքանչյուր ստացողին այն ժամերի մասին, որոնք աշխատելու եք նրա համար՝ հաշվի առնելով այն ժամերը, որոնք տրամադրում եք այլ ստացողներին, որպեսզի համոզվեք, որ չեք գերազանցում շաբաթական 66 ժամը: Եթե դուք աշխատել եք ձեր ստացողի շաբաթական հաստատված ժամերից ավել առանց ձեր ստացողի՝ վարչաշրջանից հավանության ստացման, դուք կարող եք խախտում ստանալ: Այնուամենայնիվ, ձեր ստացողը կարող է փոփոխել շաբաթական հաստատված ժամերը որոշ դեպքերում՝ առանց վարչաշրջանի հավանության:

<u>Եթե դուք ձեր ստացողի միակ մատակարարողն եք</u>, դուք կարող եք աշխատել մինչև ձեր ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կամ ամսական ժամերը:

Հաստ.	Ծառայության տեսակներ	Ծառայությունների նկարագիր
	Տնային ծառայություններ	Տան գործեր՝ տունը մաքուր պահպանելու համար, այդ թվում՝ ավլել, փոշեկուլով մաքրել, հատակը լվանալ և վաքսել, փոշին հանել և իրերը դասավորել: MPP 30-757.11
	Սննդի պատրաստում	Ճաշացանկերի պլանավորում, սննդի պատրաստում, եփում և սննդի մատուցում: M P P 30-757.131
	Մաքրում ուտելուց հետո	Եփելու տարածքի մաքրում, և ամանների, ափսեների ու դանակ-պատառաքաղների լվացում, չորացում և տեղավորում: MPP 30-757.132
	Լվացք	Հագուստի և սպիտակեղենի լվացում, չորացում, ծալում և տեղավորում: Եթե տան ներսում լվացքի մեքենա չկա, ապա այս ծառայությունը կներառի տնից դուրս լվացքատուն գնալը: M P P 30-757.134
	Սննդի առևտուր	Նպարեղենի ցուցակի կազմում, խանութ գնալը/վերադառնալը, առևտուր անելը, մեքենայի մեջ տեղադրելը, մեքենայից հանելը և գնված սնունդը դասավորելը: MPP 30-757.135(b)
	Այլ առևտուր և հանձնարարություններ	Ներառում է 1) այլ անհրաժեշտ պարագաների գնում, և 2) փոքր ու անհրաժեշտ հանձնարա ությունների կատարում, օրինակ՝ դեղատոմսի ստացումը դեղատնից: M P P 30-757.135(c)
	Շնչառության աջակցություն	Ստացողին օգնել շնչառությանն առնչվող ոչ բժշկական ծառայությունների հարցում, ինչպես օրինակ՝ թթվածնի ինքնուրույն օգտագործում և շնչառության մեքենաների մաքրում: M P P 30-757.14(b)
	Աղիքների և/կամ միզապարկի խնամք	Օգնություն ստացողին զուգարանից, տականոթներից/անկողնուն կից կոմոդից կամ միզարանից օգտվելու հարցում, օստոմիայի, հոգնայի և/կամ կաթետերների զետեղարանների դատարկում/մաքրում, տակդիրների, մեկ անգամյա օգտագործման ներքնազգեստի և մեկ անգամյա օգտագործման միջադիրների կիրառում , ստացողներին սրբելը/մաքրելը, ստացողների ձեռքերը լվանալը/չորացնելը: M P P 30-757.14(a)
	Կերակրում	Օգնություն ստացողին ուտելիս, այդ թվում՝ նրա երեսն ու ձեռքերը մաքրելը սննդից առաջ ու հետո: MPP 30-757.14(c)
	Սովորական անկողնային լոգարաններ	Անկողնուն գամված ստացողին սպունգով սովորական լողացնելը: MPP 30-757.14(d)
	Հագնվելը	Ստացողին հագնվելու և հանվելու օգնություն ցուցաբերելը, ինչպես անհրաժեշտ է: MPP 30-757.14(f)
	Դաշտանային խնամք	Հիգիենիկ անձեռոցիկների և միջադիրների արտաքին տեղադրման օգնություն: MPP 30-757.14(j)
	Վիրահատությունից հետո շարժվելը	Ստացողին տան մեջ քայլելու ու տեղաշարժվելու օգնություն, այդ թվում՝ զուգարան/-ից, դեպի մեքենա ու հետ, մեքենայի մեջ ու դուրս բժշկական այցելությունների գնալու նպատակով և/կամ ուրիշ այլընտրանքային ռեսուրսներ: MPP 30-757.14(k)
	Տեղափոխում	Օգնություն ստացողին կանգնած, նստած կամ պառկած դիրքից մեկ այլ դիրքի անցնելու համար, և/կամ կահույքի կամ սարքավորման մեկ կտորից մյուսին անցնելու համար: MPP 30-757.14(h)
	Լողանալը, բերանի հիգիենա և մազերի խնամք	Օգնություն ստացողին լողանալիս կամ ցնցուղ ընդունելիս, ատամները լվանալիս, մետաքսաթելով մաքրելիս, ատամների պրոթեզները մաքրելիս, մազերը շամպունով լվանալիս, չորացնելիս, սանրվելիս, թրաշվելիս, լոսյոն, դիմափոշի ու դեզոդորանտ քսելիս: MPP 30-757.14(e)
	Մաշկի մերսում և դիրքի փոփոխում	Մաշկի մերսում արյան շրջանառությանը նպաստելու համար և/կամ մաշկի վատթարացումը կանխելու համար, շրջում անկողնում և այլ տեսակի դիրքի փոփոխում, վերահսկում վարժություններ կատարելիս: MPP 30-757.14(g)
	Խնամք և օգնություն պրոթեզների և դեղերի հետ կապված	Պրոթեզների հանում/հագնում, պահպանում ու մաքրում, ներառյալ՝ տեսողության/լսողական սարքեր,ստացողին հիշեցնել ընդունել դեղատոմսով կամ ազատ վաճառվող դեղերը, և դեղերի տուփերի դասավորումը: MPP 30-757.14(i)
	Ուղեկցում բժշկական այցելությունների	Ուղեկցել ստացողին առողջությանը վերաբերվող այցելությունների ընթացքում: Եթե ձեզանից պահանջվում է մնալ ու հաստատված ծառայություններ տրամադրել ստացողին այցի ընթացքում, , ձեզ կվճարեն այն ժամանակի համար, երբ դուք «սպասում եք», որպեսզի տրամադրեք անհրաժեշտ ծառայությունները: MPP 30-757.151
	Ուղեկցում Այլընտրանքային ռեսուրսների	Ուղեկցել ստացողին այլընտրանքային ռեսուրսների ընթացքում: MPP 30-757.154
	Մանրակրկիտ մաքրում	Տան մանրակրկիտ մաքրում՝ վտանգավոր աղբն ու կեղտը հեռացնելու նպատակով: (Միայն մեկ անգամ) MPP 30-757.12
	Բակի վտանգների չեզոկացում	Բակում կատարվող թեթև աշխատանք՝ բարձր խոտը կամ մոլախոտը, և աղբը հեռացնելու նպատակով, երբ այդ բաները կարող են հրդեհ առաջացնել: MPP 30-757.16
	Սառույցի և ձյան մաքրում	Բակում կատարվող թեթև աշխատանք՝ սառույցն ու ձյունը կամ այլ վտանգավոր նյութերը մուտքերից ու կարևոր ծառուղիներից հեռացնելու համար, երբ այդ նյութերը վտանգավոր են դարձնում տան մուտքը: MPP 30-757.162
	Պաշտպանիչ վերահսկում	Հետևել շփոթված, մտավոր անկարողություն ունեցող կամ մտավոր հիվանդ ստացողի վարքին և միջամտել, ինչպես հարկավոր է, ստացողին վնասվածքից, վտանգից կամ դժբախտ պատահարից պաշտպանելու համար: MPP 30-757.17
	Ուսուցում և ցուցադրում	IHSS մատակարարողի կողմից կատարվող ծառայությունների մասին ուսուցում և ցուցադրում, որպեսզի ստացողը սովորի ինքնուրույն իրականացնել այս ծառայությունները: MPP 30-757.18
	Պարաբժշկական ծառայություններ	Հետևյալ պայմաններին համապատասխանող ծառայություններ՝ 1) գործողություններ, որոնք ստացողները սովորաբար ինքնուրույն կանեին, եթե չունենային ֆունկցիոնալ սահմանափակումներ, 2) գործողություններ, որոնք ստացողի ֆիզիկական կամ մտավոր վիճակի պատճառով, անհրաժեշտ են ստացողի առողջությունը պահպանելու համար, և 3) գործողություններ, որոնք ներառում են դեղերի ներարկում, մաշկի ծակում կամ մարմնի որևէ անցքի մեջ բժշկական սարքի ներարկում, գործողություններ, որոնք պահանջում են ստերիլ ընթացակարգեր, կամ պահանջում են որոշում, որը հիմնված է վկայագրված առողջապահական խնամքի մասնագետի կողմից տրված ցուցումների վրա: MPP 30-757.19

Կարևոր բաներ հիշելու համար.

- Եթե ձեզ լրացուցիչ տեղեկություններ են հարկավոր այն ծառայությունների վերաբերյալ, որոնք հաստատված են ձեր ստացողի համար, և այն աշխատանքի վերաբերյալ, որը դուք պետք է կատարեք ի լրումն նախորդ էջի աղյուսակում բերված պարտականությունների, ապա կարող եք կարդալ աղյուսակում նշված Քաղաքականությունների և ընթացակարգերի ձեռնարկի (Manual of Policies and Procedures, MPP) հատվածը CDSS-ի կայքէջում՝ http://www.cdss.ca.gov/ord/PG310.htm, կամ կարող եք դիմել ձեր վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ:
- Ձեր պարտականությունն է հետևել ձեր ստացողի կազմած աշխատանքային շաբաթվա ժամանակացույցին:
- Եթե ձեր ստացողի ամսական ժամերը փոխվում են, դուք մեկ այլ տեղեկացում կստանաք ձեր ստացողի շաբաթական հաստատված ժամերի վերաբերյալ, որը ցույց կտա ժամերի փոփոխությունը:
- Ձեր ժամանակացույցում հայցված ժամերի քանակը կկրճատվի, եթե սկսեք կամ դադարեցնեք աշխատանքն ամսվա կեսին:
- Ձեր ստացողի պարտականությունն է ձեզ վճարել որևէ արժեքի բաշխման համար, որը հանվել է ձեր վճարման չեկից:
- **Եթե աշխատել եք ստացողի հաստատված ժամերից ավել, ապա այդ ժամերը չեն համարվում IHSS ու ձեր ստացողի պարտականությունն է վճարել ձեզ այդ լրացուցիչ ժամերի համար: IHSS ծրագիրը վճարում է միայն IHSS ծրագրի հաստատված ժամերի և ծառայությունների համար:**
- Անմիջապես կապնվեք ձեր վարչաշրջանի IHSS գրասեյակի հետ, եթե ձեր ստացողը հիվանդանոց է տեղափոխվում կամ մահանում է: Առանց վարչաշրջանի հավանության՝ դուք չեք կարող հայցել այն ժամերը, երբ աշխատանքը կատարվել է ստացողի հիվանդանոցում գտնվելիս կամ մահվան օրվանից հետո:
- Սոցիալական ապահովության վարկերն ու Նահագային հաշմանդամությունն ավտոմատ կերպով հանվում է ձեր վճարման չեկից: Եթե ցանկանում եք, որ նահանգային ու դաշնային եկամտահարկերը հանվեն ձեր վճարման չեկից, ապա պետք է լրացնեք ու ձեր վարչաշրջանի IHSS գրասեյակ ներկայացնեք W-4 և/կամ DE-4 ձևերը:
- Եթե ստացողը, որի համար դուք աշխատում եք, ձեր ծնողն է, ամուսինը կամ երեխան, ապա հնարավոր է, որ դուք
  իրավասու չլինեք Սոցիալական ապահովության կամ Medicare հարկերի կամ գործազրկության հարկերի հանումների համար:
- Եթե IHSS ծառայություններ կատարելիս վնասվածք եք ստանում, անմիջապես դիմեք ձեր վարչաշրջանի IHSS կամ Հանրային իշխանության գրասեյակ:

Եթե որևէ հարցեր ունեք այս ծանուցման տեղեկությունների վերաբերյալ, կամ եթե այլևս չեք աշխատում որպես IHSS մատակարարող, խնդրում ենք դիմել ձեր վարչաշրջանի IHSS գրասեյակ: